(§ 40) և այն դէպքում, երբ նիւթական ուժերը չեն ներում նորան շարունակելու:

§ 52. Ընկերութեան գործերի յօժարակամ դադարման ժամանակ վճարվում են՝

ա) Բոլոր պարտքերն ու յանձնած գումարները.

բ) Անդամների մասնաբաժինները.

գ) Դորանից յետոյ մնացած գումարը բաժանվում է անդամների մէջ, որոնք այն ժամանակ գտնվում են ընկերութեան մէջ *):

§ 53. Իսկ եթէ ընկերութեանը անհնար լինի շարունակելը, պատասխանատուութիւնը, որ ընկնում է անդամների վերայ, բաժանվում է համաձայն § 13:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Հացի խնդիրը այնպէս մոլորեցրեց ինձ, որ ոչ միայն մեր երեւակայական ճանապարհորդութիւնս մոռացայ, այլ և իմ գլուխս էլ։

Մեր Երեւանումը մի քանի տեսակ ապրուստի եղանակ կայ՝ առեւտրականութիւն կամ տէրութենական պաշտօնների մէջ ծառայել, որոնք արդէն իւրեանց ճանապարհը գտել են և ունեն մի կտոր հաց։ Սրանք թէպէտ մեծ մասամբ աղքատ են, բայց մեր մէջ ամէնից երջանիկ մարդիկն են, սրանք են ստանում բոլորից յարգ և համակրութիւն. մի որ և իցէ քաղաքական գործ ունեցած ժամանակներս սրանց ենք դիմում, ուրեմն և սրանց ստացած ռոճիկի վրա մենք միւս դասու ժողովուրդներս աւելացնում ենք ուրիշ տնային ապրուստները, թէյ, շաքար և այլն։

Երկրորդ դասը ժողովրդի մէջ է վաճառականութիւնը, որ այդ բառի բուն նշանակութեամբը կարելի է ասել մանրավաճառութիւն կամ չարչութիւն. չնայելով որ այստեղ կարիքը այնքան մեծ չէ, սրանց աշխատածը հազիւ իւրեանց տունը կառավարում է, որովհետև հագուստի և այլ զարդուց պիտոյքի կարօտութիւն մեր մէջը հազիւ կայ. մի ձեռք հասարակ շորը երեք կամ չորս տարի է տեւում ամէն դասակարգին էլ, ծառայողները կամ իւրեանց ընտանիքը որ մեր մէջի արիստոկրատութիւնն է, իրենց մի ձեռք մաքուր հագուստովը, մի քանի տարիներ կարողանում են միւս դասից էլ բարձր երեւել։ Այս շորերը նրանք կարել են իւրեանց գործի յաջող գնացած ժամանակը։ Սրանց պարտքը մինչև հիմա մնումէ. ոչ ծախող վաճառականն է՛ վստահանում պահանջել, վախելով թէ գուցէ մի օր նա իրեն պէտք պիտի գայ և ոչ ինքը հանգերձ հագնողն է մտաբերում տալ։

Վաճառականներն էլ մնանում աւելի չափաւոր են, նահապետական կեանքն է այս դասի տանը թագաւորում, մի դուքանի աշկերտը տանն էլ կարող է պէտք գալ ծառայութիւն հարկաւոր եղած ժամանակը, մանաւանդ որ ծառայութիւն շատ քիչ կայ, տան տիկինը բաւական է որ իւր մարդը երեկոյին դուքանից տուն գալուն, հետը բերի միս կամ ուրիշ կենսական պիտոյքները, ինքը ամէնը կը պատրաստի կամ իւր սեփ տանը եղած միւս անդամների հետ և կամ եթէ միայն է, ինքը հոգ չէ, եթէ մի քանի երեխայք էլ գլխին աթած լինեն. իւր պարտաւորութիւնն է, լուանալ, եփել, երեխայք հոգալ, հագուստներ կարել և այլ ամենայն միւս տնային հոգսերը քաշել։ Եւ ընչու չը պէտք է կարողանայ կատարել, քանի որ նա ուրիշ անելիք չունի, բարեկամներին տեսութիւն գընալ շատ հազիւ է մնանում ընդունած և այն հարկ պատահած ժամանակ. ուխտագնացութիւն Նորքայ Աստուածածինը կամ Մողնի սուրբ Գէորգ կամ ուրիշ տեղեր մի քանի անգամ, ուրեմն մնում է ամբողջ տարին տան տիկնոջը իւր տնային գործովը պարապել։ Հագուստի կողմից էս դասը աւելի պարզ են, կանանցը մի չիթ մինթանէն (դէբինէն) երկու կամ երեք տարի կըտեւէ, թէկուզ մի քանի տեղ էլ կարկատած լինի, այնու ամենայնիւ տեղական կեանքը չի արգելում հագնելը։ Արհեստաւոր և մշակ դասի համար էլ խօսել հարկաւոր չէ՝ սրանք բաւական է որ այնքան աշխատեն որ ոնց և իցէ կառավարեն ցամաք հացով իւրեանց ընտանիքը. էլ ուրիշ պիտոյք չունեն. 10 տարի մի հասարակ շորը բաւական է, հազար կարկատան էլ ձգվի կամ արմունկը երեւի, ինչ կարիք։

Այսպէս էլ ամէն բանի կողմանէ չափաւորութիւն է մնանում, էս դեռ քաղաքն է, իսկ ինչ վերաբերում է գիւղերին, էլ մի հարցնել, այնտեղ ամէնքին թոնդիրն ածեն, չորահոտ չէ գալ։ Հիմա երեւակայիր թէ այստեղ ինչ մեծ վաճառականութիւն է հարկաւոր։ Մի բան միայն մեր մէջ երեւելի է՝ մեր Երեւանի գաւառի արդիւնաւէտութիւնը և հում նիւթերով առատութիւնը։

Այս է գլխաւորապէս մեր վաճառականութեան ճիւղը. եթէ մեր քաղաքացիք ունեն փոքր ի շատէ կարողութիւն, սրա շնորհքն է, փառք Աստուծոյ, որքան էլ կենսական պիտոյքները թանգ լինեն, մեր գիւղացին հացի կարօտութիւն չունի. Երեւանի հողի արդիւնաբերութեան շնորհիւ նա իւր տարեկան հացը պահելուց յետոյ, կարողանումէ ծախել, նոյնպէս և իւր վրա դրած հարկերը վճարել։

Իսկ այսպիսի դէպքերումը խեղճ է լինում բուն քաղաքացին։ Հէնց այդ դրութիւնն էլ վիճակվել էր ինձ այս տարի, որի համար քեզ սկզբումն ասացի թէ հացի խնդիրը ինձ մոլորեցրեց և քո նամակներն էլ մոռացվեցան։ Այս տարի, այսինքն 1872 թուին մեք 25-ից մինչև 30 մանէթով խալվարը հաց կերանք. այդ հեշտ չէր մեզ համար։ Մինչև հիմա մենք Երեւանցիքս էինք մեր երկրի բերքը գնում, Թիֆլիզ ուղարկում և օգուտ տեսնում, բայց հիմա ամէն բարիքի ժամանակ Երեւանի ղանթարի տակին կը գտնես մի քանի փողատէր հաստափոր Թիֆլիզեցի կամ Ղարաբաղցի, որոնք մէկին երկու աւել վճարելով խլում են մեր ապրուստը և որ ցաւալին է մեզ իրենց ծառայեցնում ու արածներն էլ մեզ համար բարերարութիւն համարում։

Այսպէս ուրեմն այս անկոչ հիւրերը մեր տունը քանդում են ու մեր մէջ բարերարի անուն ժառանգում, մի որ և իցէ հասարակական գործում մի քանի մանէթներ խոստանալով ու վերջումը այն էլ չտալով. հեռանում են, իւրեանց նմաններին իրենց տեղը յանձնելով։

Պահլաւունի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուս Тифлисскій Вѣстникъ լրագրում տպվեցաւ հետեւեալ նամակը։

Պ. Խմբագիր. Ձեր ընթերցողներին յայտնի է արդէն, որ կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան մէջ ես առաջարկութիւն եմ արել գիւղատնտեսական լրագրի հրատարակութեան անհրաժեշտութեան մասին, հայոց և վրաց լեզուով. Ընկերութեան տարեկան ժողովում յայտնված է եղել, որ ցաւելով այդ դիտաւորութիւնը այս րոպէիս իրագործելի չէ ընկերութեան նիւթական միջոցների պակասութեան պատճառով. Մի և նոյն ժամանակ և վրաց գիւղական լրագիրը զրկվեցաւ օժանդակութենից և ընկերութիւնը հիմնում է իր հաշւով մի նոր թերթ երկրիս գիւղական ազգաբնակութեան համար, բայց միայն վրաց լեզվով. Ինչ որ վերաբերում է իմ առաջարկութեանը, ինձ հասնում են լուրեր, իբր թէ ինձ կառաջարկվի օգուտ քաղել գիւղատնտեսական նիւթից իմ լրագրիս համար. Եթէ այդ լուրերը ճշմարիտ են, ինձ մնում է ընկերութեանը շնորհակալութիւնս յայտնելուց յետոյ, կրկնել այն, ինչ որ ես պատիւ ունեցայ բառացի յայտնել ընկերութեան ընդհանուր ժողովի մէջ, այն է որ ոչ իմ լրագրիս դիրքը, ոչ նրա պրօգրամման ինձ թոյլ չեն տալիս նրան մի չափազանց մասնագիտական բովանդակութիւն տալ. իմ առաջարկութեամբս ես կամեցայ ցոյց տալ ընկերութեանը նրա համար մի անծանօթ երեւոյթի,—երկրիս հայոց գիւղական ազգաբնակութեան ձգտողութեան վրա դէպի գիւղատնտեսական խնդիրների ուսումնասիրութիւնը և սրանից հետեւող անհրաժեշտութեան վրա՝ ունենալ մի հրատարակութիւն, որ մտցնէր ժողովրդի մէջ նրան հարկաւոր հմտութիւնները։ Սորանով ես ուզեցի օգնել ընկերութեանը իր գոյութեան խնդիրներից մինի վճռելու գործի մէջ, իսկ դուրս է գալիս, ընդհակառակն, որ ընկերութիւնը կամենում է ինձ օգնել։

Դօկտօր Գրիգոր Արծրունի

⁂

Ս. Պետերբուրգից գրում է մեր լրագրին ծերունի հայր Գաբրիէլ Պատկանեանցը որ Նոր-Նախիջեւանի բարեգործական ընկերութիւնը, 13 տարի առաջ հիմնած, իր ծախսով կրթութիւն է տալիս 14 հայ որբերին (տղերանց և օրիորդներին) որք ապագայում պիտի զարգանան մանկաբարձութեան և բժշկութեան մէջ. Նոյն ընկերութեան ծախսով այժմ մանկաբարձութիւն է ուսանում Ս. Պետերբուրգում օրիորդ Մարիամ Վարդանեան Հալաճեանցը։

⁂

Ղզլարից գրում են մեզ որ հանգուցեալ մեծ. Մելիկովը կտակից քաղաքիս ազգային ծխական ուսումնարաններին 1000 ռուբլի։ Մեծ. Թղթակիցը մեղադրումէ մեզ, որ մենք անուշադիր ենք այդ տեսակ երեւոյթներին և որ այդ լուրը մեզ ուղարկված է եղել քանի մի ամիս սորանից առաջ։ Մենք չենք ժխտում, որ ստացած լինէինք այդ լուրը, եթէ ոչ մենք միշտ համակրութեամբ ենք ընդունում, և շտապում ենք տպել այդ տեսակ բարի գործերի վերաբերութեամբ տեղեկութիւնները։

⁂

Մենք ստացանք Կ. Պօլսից պ. Պաղդասարեանի «Աշնան տերեւներ, կամ գաղտնիք երիտասարդաց» անունով գրքոյկը։ Մի օրինակի գինը 1 ֆրանկ է, առանց փօստի ծախքի։ Հասցէն պէտք է գրել այսպէս՝ G. Baghdasarian, Core of Mrs S. m. Minasian D. Co. Galata.—Constantinople.

⁂

«Մեղու Հայաստանի» լրագիրը լսել է, որ երիտասարդներից մինը, որ ուսանում է Հէյդէլբերգում, ձեռնամուխ է եղել կազմելու մի բնագիտական բառարան։

⁂

Ռուս Биржа լրագիրը հաղորդում է, որ Մոսկվայի համալսարանի տարեդարձի օրը եղել է մի պարահանդէս, որտեղ հաւաքվեցաւ յօգուտ համալսարանի չքաւոր ուսանողների 30,000 ռուբլի, որ գումարը կամենում են աւելի յարմարութեամբ գործ դնել քան թէ անցեալ տարիները։

⁂

«Արարատ» ամսագրի փետրվարի տետրակը ըստացվեցաւ։ Ուշադրութեան արժանի է Վահան վարդ. Բաստամեանցի յօդվածը, որի մասին «Մըշակի» խմբագրութիւնը կաշխատէ յայտնել իր կարծիքը։

⁂

Պ. Անտօն Մելիք-Դադայեանցը ուղարկել է մեզ մի նամակ Ղուբայից, որ յաջորդ համարներից մինի մէջ տպելու ենք։ Յիշեալ պարոնը հաղորդումէ մեզ և հետեւեալ լուրը՝ Ղուբայի բարեկարգութիւնը կամաց կամաց սկսել է խանգարվել, էլի առաջվայ նման լսվում են մարդասպանութեան և յափշտակութեան սարսափելի լուրերը։ Եթէ այս մասին տեղական կառավարութիւնը հոգ չանէ, կարծեմ Ղուբան էլի կը լինի, ինչ որ ութ ամիս առաջ էր։

⁂

Մեզ գրում են Ալէքսանդրապօլից՝ քաղաքիս մէջ հրապարակական դասախօսութիւնք կամ ընկերական զրոյցները փոքր առ փոքր բազմանում են և նշանակութիւն են ստանում. Բժիշկ Ա. Բաբայեանցի դասախօսութիւնքը կրկնվում են շաբաթէ շաբաթ և ամեն անգամ աւելի ու աւելի ժողովրդի համակրութիւն են գրաւում. Նոյն կլուբում նշանակվեցան «առողջապահական դասախօսութիւնքը» որ բժիշկ Գաբ. Յովհաննիսեանցը նոյնպէս աջողութեամբ է կարդում. Այդ երիտասարդներից մինը, պ. Բաբայեանցը իր դասերի համար բարեգործական նպատակով լսողներից վարձ է նշանակում, միւսը, պ. Յովհաննիսեանցը ձրի է կարդում։ (Ափսոս որ մեր թղթակիցը չէ հաղորդում մեզ ինչ առարկայի վրա է կարդում բժիշկ Բաբայեանցը)։ Այս կիրակի, շարունակումէ մեր թղթակիցը, սկսվեցան Հոգևոր հայոց ուսումնարանում պ. Հ. Ղուկասեանցի դասախօսութիւնքը,—բացատրութիւնք ֆիզիքական սկզբնական երեւոյթների։ Այդ դասերը շարունակութիւն են ուսումնարանական դասերի, բայց մի և նոյն ժամանակ նշանակված են և ժողովրդից ցանկացողների համար։ Լսում ենք որ և պ. Բէգնազարեանը դիտաւորութիւն ունէ մանկավարժութեան դասախօսութիւններ սկսել թէ մեր, թէ վիճակիս վարժապետաց համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՕԼԼԱՆԴԻԱ

Նորերումս հրատարակվեցաւ Բէրլինում մի գերմաներէն գրքոյկ հետեւեալ հօլլանդական վերնագրով „Is Nederland verdedigbar“ (պաշտպանվելու է արդեօք Հօլլանդիան)։ Հեղինակը աչքի առաջն ունենալով այն կենսական խնդիրը, որ Հօլլանդիայում այս րոպէիս ամենքիս հետաքրքրում է և որի մասին ինքն մինիստրութիւնը մշակումէ մի պրօէկտ՝ միջոց գտնել փոքրիկ երկիրը զինուորական կերպով պաշտպանելու, եթէ Գերմանիայի կողմից յարձակումն կը լինի։ Վաղուց է արդէն Հօլլանդիան համոզվել է, որ վաղ թէ ուշ Գերմանիան կը կամենայ միացնել իրան այդ փոքրիկ գերմանական երկիրը և բրօշիւրի հեղինակը հետեւեալ հարց է առաջարկում՝ արդեօք այժմ կունենայ Հօլլանդիան, պատահած դէպքում, իրան զէնքով պաշտպանել Գերմանիայի զօրութեան դէմ և աւելի գործնական չէր լինի խաղաղ ճանապարհով առաջն առնել այդ վտանգին, միանալով Գերմանիայի հետ, ոչ թէ քաղաքական կերպով, այլ ընդհանուր առեւտրական և մաքսի պայմաններով, այսինքն թող դաշնակցութիւնը լինի լոկ անտեսական։ Բայց հազիւ թէ այդ գրվածքը կարողանայ համակրութիւն գտնել Հօլլանդիայի հասարակական կարծիքի կողմից՝ այդտեղ անչափ ատելութիւն կայ դէպի գերմանական տարրը։ Հօլլանդացիները շատ հպարտ են իրանց անկախութեամբ և միշտ յոյս ունեն թէ բաղդը, որ նրանց շատ անգամ նպաստած է, դարձեալ կ'օգնէ նրանց և այս դէպքում իրանց սիրելի անկախութիւնը պահելու։

ՖՐԱՆՍԻԱ

Լէգիտիմիստական և Օռլէանեան կուսակցութիւնները, որք Նապօլէօնի ժամանակ բարեկամ էին միմեանց մէջ, այժմ անչափ թշնամացել են։ Լէգիտիմիստական „L'Union“ և Օռլէանեան „Le Francais“ լրագիրները միմեանց յանդիմանութիւններ են անում և ամենածանր խօսքեր են ասում, միմեանց մեղադրելով փառասիրութեան և ինքնասիրութեան մէջ։

Կղերական „Univers“ լրագիրը շատ է ուրախանում, որ քանի գնում է, Ֆրանսիայի մէջ բազմանում են շինվող եկեղեցիների թիւը։ Մինչև անգամ անցեալ պատերազմը չը կարողացաւ ժողովրդի եռանդին արգելք լինել այդ աստուածահաճոյ շինութիւնները շարունակելու։

Շուտով հրատարակվելու է մարշալ Մակ-Մահօնի „De Châlons á Sedan“ (Շալօնից մինչև Սէդան) վերնագրով գիրքը։ Նա վաղուց գրած էր արդէն, բայց չէր հրատարակվում, որովհետև մարշալը այդ գրքի մէջ Նապօլէօնին մեղադրում է և իր անձն է արդարացնում։ Իսկ այժմ արգելք չը կայ նորա հրատարակման համար, որովհետև Նապօլէօնը մեռաւ։

Ֆրանսիան կամենում էր մարտի 2-ին վճարել իր պատերազմական պարտքից մնացած տոկոսիքը 120 միլիոն ֆրանկ։ Մարտի 6-ին նա վճարելու է 150 միլիոն և այնուհետև նորա պարտքի գումարը կը լինի 1½ միլիարդ ֆրանկ։

ԻՏԱԼԻԱ

Քանի մի լրագիրներ հաւատացնում են որ գարիբալդեան կուսակցութիւնը դիտաւորութիւն ունի գնալ Իսպանիա, հանրապետութեան համար պատերազմելու նպատակով։

Հռօմի պապը անդադար զբաղված է ճառեր կարդալով զանազան ազգութիւնների, դասերի ու սեռերի ներկայացուցիչների առաջ, որք ներկայանումեն նրան։ Փետրվարի 20-ին նա քահանաների առաջ ճառ կարդաց, նոյն ամսի 23-ին քանի մի տիկինների առաջ, 28-ին ամերիկացիների մի պատգամաւորութեան առաջ։ Ճառերի բովանդակութիւնը գրեթէ միշտ նոյն է՝ բարոյականութեան անհամ քարոզները, առաքինութեանը ձգտելու խրատներ և յորդորանք համբերութեամբ սպասել մինչև որ կաթօլիկութիւնը յաղթող կը մնայ բոլոր արգելքներից…

Իտալական „La Libertà“ լրագիրը խօսելով այն սիրալիր ընդունելութեան մասին որ իտալացիք գտան գերմանացիների կողմից Թօրն քաղաքում Կօպերնիկի տօնախմբութեան ժամանակ, աւելացնումէ՝ „թէ մեր իշխանները գնան Գերմանիա, թէ գիտնականները մասնակից լինեն գերմանական ուսումնական ժողովներին, թէ օֆիցէրները ուղարկվեն Գերմանիայի զօրքի կազմակերպութիւնը ուսումնասիրելու համար,—գերմանացիները ընդունումեն մեզ միշտ անասելի համակրութեամբ։ Երկու ազգերը զգումեն, որ նրանք կապված են ընդհանուր օգուտներով, սերտ բարեկամութեան կապե-

---

*) Անցեալ համարի մէջ մենք սխալմամբ տպեցինք ծանօթութիւնը, § 13 տակ, որ միայն § 9 էր վերաբերում և որ պիտի բառ առ բառ կրկնենք և այս § 52, գ) յօդվածի մասին։ (Տես. «Մշակ» № 10)։ Խմբ.